Ապահովվածությունը

Բանկը տրամադրում է ապահովություն ունեցող վարկեր: Տրամադրված վարկերը համարվում են ապահովվածություն ունեցող եթե բավարարված են հետևյալ պայմաններից գոնե մեկը.

- Ապահովված են գրավով կամ բանկի կողմից ընդունելի ձեռնարկության երաշխավորությունով, որի հետ կնքված է երաշխավորության պայմանագիր,
- Ապահովված են վարկի վերադարձելիությունը հիմնավորող գործարար ծրագրով, պայմանագրերով կամ այլ հիմնավոր փաստաթղթերով,
- Ապահովված են վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող բավարար տեղեկատվությամբ,
- Ապահովված են վարկառուի ֆինանսական հոսքերը բնութագրող բավարար տեղեկատվությամբ:

Բանկի համար գրավի առարկա չի կարող հանդիսանալ.

- Շրջանառությունից հանված գույքը,
- Անբաժանելի գույքի առանձին մասերը,
- Վարձակալության իրավունքը,
- Այլ պայմանագրով արդեն գրավադրված գույքը քաղաքային, գյուղական և թաղային համայնքների,
- Սեփականության իրավունքով պատկանող գույքը:

Ուշադրություն.
Ձեր պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու դեպքում Ձեր պարտքի վերաբերյալ տեղեկությունները կուղարկվեն վարկային ռեգիստր և վարկային բյուրո (աքոա):

Ուշադրություն.
Վատ վարկային պատմություն ունենալը Ձեզ համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս:

Ուշադրություն.
Ձեր կողմից գրավադրված գույքը (տունը, մեքենան կամ այլ) կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր վարկային պարտավորությունները: